

**ԲԱՅԱՍԱԿԱՆ ՀՈԳԵՎԻՃԱԿՆԵՐԻ
ՓՈԽԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆՁԻ
ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՔԱԳՃՈՒՄ**

Մ. Պ. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

Մարդկային կեցության ժամանակակից զարգացումների անխուսափելիորեն զուգակցում են նաև բացասական երևույթներ: Դրանք դրսևորվում են բնական և մարդածին աղետների, սոցիալ-տնտեսական ու քաղաքական ճգնաժամերի, համաճարակների, ահաբեկչական գործողությունների, մեծ ու փոքր պատերազմների և այլ ձևերով: Հատկապես մեծ քաղաքներում, ուր ապրում են հարյուրհազարավոր, միլիոնավոր մարդիկ, մըշտապես առկա է վտանգի սպառնալիքը: Մի կողմից՝ սպառնացող վտանգի անկանխատեսելիությունը, մյուս կողմից՝ մարդու անպաշտպանվածությունը նրան մշտապես պահում են լարվածության, վախի պայմաններում: Այսպիսի դեպքերում օրգանիզմն իր ամբողջականությունը, ներքին հավասարակշռությունը պահպանելու համար գործի է դնում նոր գործառնության ինտեգրացիան, ներգրավում պաշտպանական նոր մեխանիզմներ: Հ. Սելյեն այն անվանում է ադապտացիոն սինդրոմ¹: Թեև սկզբնական շրջանում օրգանիզմի հնարավորությունները մեծանում են, այնուամենայնիվ որոշ ժամանակ անց (այն սուբյեկտիվ բնույթի է) սկսվում է ընդհանուր հնարավորությունների անկման գործընթացը, քանզի աճող պրեսների պայմաններում օրգանիզմի պահեստային հնարավորությունները սպառվում են: Նկատվում է հոգնածություն, զերհոգնածություն, աշխատունակության կորուստ, հոգեֆիզիոլոգիական համակարգերում՝ գործառնության և կառուցվածքային խանգարումների բնորոշ ախտանիշներ (սիրտ-անոթային, մարսողական, նյարդային, հեմաշարժական և այլն): Արտակարգ իրավիճակներում, երբ մշտապես առկա է վտանգի ենթարկվելու սպառնալիքը, ազգաբնակչության լայն զանգվածների մեջ նկատվում են համատարած տազնապի, վախի, դժգոհությունների, խուճապի ռեակցիաներ²:

Այսպես, վերջին տարիներին Ռուսաստանում, ԱՄՆ-ում, Մերձավոր Արևելքում հաճախակի դարձած ահաբեկչական գործողությունները զանգվածային տագնապի, ահ ու սարսափի մեջ են պահում միլիոնավոր մարդկանց: Ժամանակակից մասնագիտական գրականության մեջ վաղուց արդեն իր հաստատուն տեղն է գտել «քաղաքային վախ» հասկացությունը, որը XXI դարի մարդու մշտական ուղեկիցն է³:

ՀՀ ազգաբնակչությունը, սկսած անցյալ դարի ութսունական թվականների վերջերից մինչ օրս, հայտնի պատճառներով ապրում է այդ հոգեվիճակը իր բոլոր հետևանքներով: Ըստ Լ. Կուլիկովի ուսումնասիրության տվյալների՝ օրգանիզմի գործառնության հնարավորությունների անկումը, սահմանային հոգեվիճակների զարգացումը, հիվանդագին վիճակների սրացումը տեղի են ունենում հոգեկան ոլորտի տևական լարվածության պայմաններում: Մեր հանրապետությունում 1990-ական թվականների սոցիալ-տնտեսական, քաղաքական փոփոխությունները իրենց հետ բերեցին նաև բազմաթիվ բացասական երևույթներ: Դրանք արտահայտվում էին մարդկանց զանգվածային աշխատազրկության, մարդու իրավունքների ոտնահարման, շատերի կողմից նոր ձևավորվող հասարակությունը դեռևս չըմբռնելու, տնտեսական և այլ դժվարությունների ձևերով: Օտտ կարճ

¹ Տե՛ս Գ. Селье, Очерки об адаптационном синдроме, М., 1960, էջ 73:

² Տե՛ս Н. Петров, Человек в чрезвычайных ситуациях, Челябинск, 1997, էջ 42:

³ Տե՛ս Л. Лебедь, Страхи и стрессы большого города, Ростов-на-Дону, 2004, էջ 317:

⁴ Տե՛ս Л. В. Куликов, Психогигиена личности. Вопросы психологической устойчивости и психопрофилактики, М., 2004, էջ 276:

ժամանակահատվածում տեղի ունեցող դեռևս անհասկանալի փոփոխությունները մարդկանց հոգեկան ոլորտում (և ամբողջ օրգանիզմում) ակամայից առաջացնում էին խորքային և կառուցվածքային տեղաշարժեր¹: Այսպիսի դեպքերում ամենափոքր բացասական գործոնը կարող է մարդու օրգանիզմում առաջացնել անոթային հիվանդություններ, ուղեղի տարբեր հատվածների կաթվածահարություն, ուռուցքներ և այլն: Եթե անդրադառնանք սահմանափակ գոտու ազգաբնակչությանը, ապա նրանք դեռևս անցյալ դարի 80-ական թվականների վերջերից մինչ օրս էլ գտնվում են այդ վիճակում: Նրանք ապրել են մինչպատերազմական, քաղաքական, սոցիալ-տնտեսական, հոգեբանական լարվածությունը, պատերազմի հետ կապված մարդկային և նյութական, բարոյական կորուստների սթրես վիճակները: Իսկ պատերազմի հարաբերական ավարտից հետո սահմանի մյուս կողմից արձակվող կրակահերթերը այդ տարածքներում ապրող մարդկանց պահում են մշտական լարվածության մեջ:

Բացասական հույզերի մշտական ակայությունը անդրադառնում է մարդկանց ընդհանուր և հոգեկան առողջության վրա: Նման պայմաններում փոխվում են անձի կենսագործունեության դրոպապատճառները, հետաքրքրությունները, արժեքային կողմնորոշիչները, ներկայի ու ապագայի նկատմամբ վերաբերմունքը և այլն: Անձի մտահոգությունն իր և իր հարազատների առողջության նկատմամբ դառնում է գերխնդիր՝ կապված անբարենպաստ պայմաններում կենսագործունեության պահպանման հետ: Մյուս կողմից համատարած դժվարությունները սահմանափակում են անձի ինքնադրսևորման շրջանակները: Գործունեության, շփման, հաղորդակցման դաշտը դառնում է զուտ անձնական կարիքների բավարարման ուղղված ակտիվության դրսևորում: Սրվում են ինքնապաշտպանական հոգեֆիզիոլոգիական մեխանիզմները: Անձի գիտակցական ակտիվությունը ուղղվում է սեփական «ես»-ի, «իմ»-ի պահպանմանը, նրա գոյատևմանը: Ընդհանուրը, ուրիշներից դառնում են նրա գիտակցության համար խորթ: Անձը ձեռք է բերում էսակենտրոն բնավորության շեշտավորված գծեր, որոնք ժամանակի ընթացքում նրա համար դառնում են կայուն բնութագրեր:

Թերևս նաև այս մեխանիզմով կարելի է բացատրել հայերի մեջ դրսևորվող ինդիվիդուալիզմը, խմբային համագործակցության ձգտման պակասը: Հայ ժողովուրդը դարեր առաջ պետականությունը կորցնելուց հետո հայտնվեց ձուլման և տարբեր արհավիրքների, վտանգների պայմաններում: Գոյատևման մշտական պայքարը դարձավ ապրելակերպ: Ինչ խոսք, բազմադարյան մաքառումների պայմաններում հայ ժողովուրդը թրծվեց, բյուրեղացավ ու աչքի ընկավ միմիայն իրեն բնորոշ բարձր հոգեկան հատկանիշներով և ունակություններով: Սակայն, անդառնալի կորուստներով պայմանավորված, սերունդների հիշողության մեջ պահպանվող ապրումները (վիշտը, կակիծը, ցասումը, բողոքը) «մաց-ցորդային» հույզերի ձևով փոխանցվել են իրենց ժառանգներին: Ժամանակի ընթացքում ձևավորվել են հայերին բնորոշ հուզականության, դիմախաղի, երևույթների նկատմամբ յուրահատուկ վերաբերմունքի դրսևորման կայուն գծեր: Դրանցից ազատվելու հնարավորության բացակայությունը մարդկանց հոգեկան համակարգում ձևավորել է իրականության գնահատման, արտացոլման հային բնորոշ ձևեր:

Անբարենպաստ պայմաններում գտնվող մարդկանց հոգեվիճակների սոցիալ-հոգեբանական վարքի փոխակերպման առանձնահատկությունները ուսումնասիրելու համար հետազոտվել է 18-60 տարեկան 200 մարդ, որոնք, ըստ տարիքային առանձնահատկությունների, ֆիզիկական ակտիվության, բաժանվել են 4 խմբի՝ յուրաքանչյուրում 50-ական մարդ (25 տղամարդ և 25 կին). երիտասարդներ՝ 18-ից մինչև 35 տարեկան, հասուն տարիքի՝ 36-45 տարեկան, միջին տարիքի՝ 46-55 և ավագ՝ 56-65 տարեկան:

Ուսումնասիրվել են հետազոտվողների իրավիճակային և անձնային տագնապալիության մակարդակը, սթրես գործոնների նկատմամբ կայունությունը, նյարդահոգեկան լարվածության մակարդակը, առողջության և երջանկության ինքնագնահատականը, բնավորության շեշտավածության դրսևորումները: Միևնույն ժամանակ հարցաթերթիկի

¹ Տե՛ս Մ. Մկրտումյան, Ետվանսվածքային վիճակների հոգեբանական բնութագրերը (1988-1994 թթ. ՀՀ ազգաբնակչության օրինակով), «Բանբեր Երևանի համալսարանի», 1998, № 2, էջ 197-204:

միջոցով ուսումնասիրվել է հետազոտվողների անվտանգության սուբյեկտիվ զգացման մակարդակը:

Հետազոտությունը իրականացվել է մայրաքաղաքի և սահմանամերձ գոտու (Տավուշի մարզ) ազգաբնակչության հետ 1998-2003 թվականների ընթացքում: Հետազոտության մասնակիցները, նախնական հարցման համաձայն, վերջին 10-15 տարիների ընթացքում ենթարկվել են ամենատարբեր բացասական գործոնների ազդեցության, որոնց տևականությունը և ուժգնությունը իրենց իսկ պնդմամբ մեծ է եղել:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ չորս խմբերում էլ սեփական անձի, հարազատների, մերձավորների, անվտանգության և ապահովության զգացումը գտնվում է ցածր մակարդակի վրա: Օրգանական և ընդհանուր աշխատունակության հոգեֆիզիոլոգիական ցուցանիշների փոփոխությունները, ըստ Վ. Ռոժդեստովենկայայի հետազոտության տվյալների⁶, խոսում են ընդհանուր հոգնածության, գերհոգնածության, օրգանիզմի գործառույթային հնարավորությունների անկման մասին: Երջանկության ինքնագնահատականը միջին առողջություն և ապրելակերպ ունեցող մարդկանց մեջ, ըստ թեստի պահանջների, պետք է կենտրոնացվի ուղղահայաց առանցքի Օ-ական մակարդակի շուրջ՝ ± 2 բալի շրջանակներում: ± 3 և ավելի ինքնագնահատականը խոսում է $+$ -ի՝ ոչ օբյեկտիվ գնահատականի, իսկ $-$ -ի դեպքում՝ դժբախտ լինելու մասին: Մեր համակազմի 3 խմբերում էլ, բացի երիտասարդներից, երջանկության ինքնագնահատականը հիմնականում կենտրոնացած է $- 2$ միջից ցածր:

Երջանկության հոգեբանական կառուցվածքի բաղադրամասերից է ազատ գործելու, հնարավորությունների լիարժեք իրականացման, ամենատարբեր պահանջմունքների բավարարման կարողունակությունը: Սակայն սոցիալ-տնտեսական համատարած դժվարությունները, հոգեբանական փոփոխվող արժեքների առկայությունը և ինքնադրսևորման պայմանների բացակայությունը բնականաբար փոխում են մարդկանց պատկերացումները երջանկության և առողջության վերաբերյալ:

Տագնապալիության մակարդակը չափվել է Թելլորի անձնային և իրավիճակային տագնապալիության թեստի օգնությամբ: Հարկ է նշել, որ տագնապալիության մակարդակը բարձր է (20-ից բարձր միջև և 40-45 միավոր) հասուն և միջին տարիքի անձանց մեջ, որոնք, լինելով ընտանիքի հիմնական անդամներ, կերակրողը, առօրյայում անհամեմատ շատ են ենթարկվում սթրեսածին, տագնապ առաջացնող գործոնների ազդեցությանը: Տևական տագնապը, վախը, լարվածությունը, ընկճվածությունը հանգեցնում են օրգանիզմի կառուցվածքային և գործառույթային փոփոխությունների, որոնք թողստվածության պայմաններում (վերականգնողական աշխատանքների բացակայության) միտում ունեն սահմանային վիճակների ձգտման: Այսպիսով՝ հոգեվիճակների, օրգանիզմի առողջության, գործառույթային հնարավորությունների փոփոխությունները հանգեցրել են մեր կողմից հետազոտված միջին և ավագ սերնդի անձանց բնավորության ակցենտավորման:

Անձի գիտակցությունը ձևավորվում է ազգային, մշակութային, բարոյական և այլ արժեքների հետ ակտիվ շփման շրջանակներում: Դրանում ձևավորվում են անձի հայացքները, սկզբունքները, հանդգնումները: Մշտական կարիքների մեջ գտնվող անձը կախվածության մեջ է հանգամանքներից, այդ իսկ պատճառով նա ավելի շատ կարևորում է կենցաղային, առաջնային պահանջմունքների բավարարման համապատասխանող արժեքները: Հանգամանքներից կախվածություն ունեցող, աղքատության մեջ ապրող մարդկանց ապրելակերպը պայմանավորում է նաև նրանց գիտակցությունը, հայացքները, վերաբերմունքը միջավայրի, իրականության և ապագայի նկատմամբ: Բացասական վիճակների տևականությունը մարդկանց բնավորության կառուցվածքում առաջացնում է սոցիալական երևույթների, մարդկանց, ձևավորվող հարաբերությունների նկատմամբ ընդգծված վերաբերմունք կամ շերտավորվածություն⁷: Օարունակական մխիթարություն, օգնություն հայցող մարդը դառնում է փնթփնթան-բողոքավոր: Հաճախ, իրերի բերումով, նա հայտնվում է բողոքավորների, ընդդիմախոսների, աղանդավորականների շարքերում:

⁶ Տե՛ս В. Рождественская, Индивидуальные различия работоспособности, М., 1980, էջ 120:

⁷ Տե՛ս К. Леонард, Акцентуированные личности, М., 1989, էջ 225:

Քանզի այնտեղ հիմնականում դժվար հոգեվիճակում գտնվող մարդիկ են, ուր «գտնում են» պահի համար իր պահանջները բավարարող, իր հոգսերը «կիսող» համախոհներ: Այսինքն՝ մարդը հայտնվում է «յուրայինների» միջավայրում՝ հեռանալով, մեկուսանալով նախկինում իր կողմից ծավալած հանրօգուտ ակտիվ գործունեությունից:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ մեր համակազմի համար օրգանիզմի հոգեֆիզիոլոգիական փոփոխությունները, սոցիալ-հոգեբանական վարքի դրսևորումները արտահայտվում են փուլային ձևերով:

Ըստ մարդկանց օրգանիզմի հոգեֆիզիոլոգիական փոփոխությունների՝ հետազոտության արդյունքների հիման վրա առանձնացրել ենք 4 փուլ, որոնք ունեն հետևյալ բնութագրերը:

Անորոշության փուլ: Երբ տեղի ունեցող դեպքերի, զարգացումների վերաբերյալ անձը ունենում է կցկտուր տեղեկություններ, երբ նրան հայտնի չէ ստեղծված իրավիճակի պատճառը: Նման պայմաններում այսպիսի վիճակը կրում է ընդհանրական բնույթ: Տարածված շշուկներն ու հաճախ ապակողմորոշող տեղեկություններն անհանգստացնում, տազնապ են առաջացնում լայն զանգվածների շրջանում: Մարդը հայտնվում է լարվածության, անորոշության մեջ: Երևույթի զանգվածայնությունը, ստույգ տեղեկությունների բացակայությունը մղում են մարդուն իրավիճակից դուրս գալու ելք որոնել, սակայն նա ներքին ուժերի, հնարավորությունների կենտրոնացում չի դրսևորում: Հունենալով հետագա գործողությունների կատարման հստակ ծրագիր՝ նա ենթագիտակցորեն ենթարկվում է պաշտպանական բնազդներին, որոնք այդ ժամանակամիջոցում բնականոն կերպով սրվում են⁶: Ժամանակի տևողության և դրսևորման առումով դրանք անհատական բնույթ ունեն: Մյուս կողմից էլ դրանց զանգվածային բնույթը, միևնույն ծրագրի, նպատակի, ինչպես նաև կատարվածի իմաստավորման համար ժամանակի բացակայության գործոնը մարդկանց գործողությունները դարձնում են քառային, անկառավարելի: «Ժամանակի գործոնից կախված՝ հուզական ռեակցիան ձեռք է բերում շեշտակի զարգացման աֆեկտի կամ մնայուն տրամադրության բնույթ, որը պահպանվում է ժամերով, օրերով, շաբաթներով»⁷: Սա խուճապի առաջին փուլն է, որն անկառավարելիության դեպքում կարող է մարդկանց մղել անկանխատեսելի գործողությունների: Հաճախ չհասկանալով իրենց հետ կատարվող երևույթի պատճառները, դրա հետևանքով առաջացած զայրույթը, ատելությունը, մարդիկ կարող են կուտակված ներքին էներգիան զանգվածաբար ուղղել որևէ օբյեկտի վրա: Լարվածության պարպման անհրաժեշտությունը սովորաբար փնտրում է քավության նոխազ: Սրա վտանգավորությունն այն է, որ հաճախ այսպիսի դեպքերում օբյեկտ են դառնում անմեղ կամ երևույթին չառնչվող անձինք կամ հանգամանքներ: Մյուս կողմից՝ կարող է նկատվել հոգեբանական փախուստ (անձի մեկուսացում, միգրացիա, ասպարեզը թողնելու ցանկություն): Այս փուլի մեղմացման, չեզոքացման գործընթացը պահանջում է անհրաժեշտ տեղեկատվության և ժամանակի հատկացում: Ստանալով անհրաժեշտ տեղեկատվություն և այդ բոլորը վերլուծելու հնարավորություն՝ անձի մեջ առաջանում է լարվածության յուրօրինակ պարպում: Անմիջապես չեզոքանում են իրարամերձ մտքերն ու կասկածները: Անձը իր համար հայտնաբերում է լավագույն վճռի կայացման տարբերակը: Նա դառնում է սթափ, հավասարակշռված, կառավարելիության առումով՝ պատրաստակամ:

Ծրկորող փուլն ակտիվ պաշտպանական գործողությունների փուլն է: Անձը հստակ պատկերացնում է իր հետ կատարվածը, միջավայրի փոփոխությունները, ռեալ գնահատում է ստեղծված իրավիճակն ու ձեռնարկում ինքնավերահսկման համապատասխան միջոցառումներ: Միտքը դառնում է հստակ, որոշումները՝ հաստատ: Իրադարձությունների վերաբերյալ լիարժեք տեղեկատվության առկայությունը հնարավորություն է տալիս նույնիսկ դեպքերի հավանական զարգացման կանխատեսում, որի շնորհիվ անձը ապագա քայլերի հստակ ծրագրեր է կառուցում՝ արտակարգ իրավիճակից դուրս գալու դրանց զարգացումները կանխարգելելու, իր և մերձավորների կյանքի անվտանգությունը ապահովելու ուղղությամբ:

⁶ Տե՛ս P. Берон, Агрессия, М., 1997, էջ 193:

⁷ Տե՛ս В. Вильюнас, Психология эмоций, М., 2004, էջ 278:

Երրորդ փուլին բնորոշ է մարդկային և գյութական կորուստների, հոգեբանական, ֆիզիկական վնասվածքների վերագնահատումը, հաշվառումը: Մթափ մտածողությունը հնարավորություն է ընձեռում վերանայել իր հետ կատարվածը, դեպքերի ողջ ընթացքը, սեփական գործողությունների, արարքների ողջ շղթան և թույլ տված վրիպումներն ու սխալները: Մարդկային, գյութական, բարոյական արժեքների ծավալների ու կորուստների բնույթի հետ կապված՝ անձի մեջ կարող է առաջանալ խղճի խայթի, մեղքի, մեղավորության զգացում, որը որոշ ժամանակ ծանրանում է նրա հոգու վրա: Առանձին մարդկանց մեջ կարող է դրսևորվել ինքնախարազանման, մեկուսացման, խորը դեպրեսիվ վիճակներ: Մյուս դեպքում, երբ կորուստներ չկան, կամ վրիպումներն ու սխալներն աննշան են, բարձրանում է անձի ինքնագնահատականը, իր հնարավորությունների նկատմամբ վստահությունը:

Չորրորդ փուլը աչքի է ընկնում անձի կողմից կորուստների հետևանքով առաջացած հույզերի վերապրմամբ: Դրանց պարպման դեպքում առաջանում է իրականության, կյանքի, ապագայի վերաիմաստավորում, վերաարժեքավորում: Այս փուլում հիշողության շնորհիվ անձը մանրամասն վերլուծում, «նշանավորում է» անցյալի իրադարձությունները, նորովի է գնահատում իր հետ կատարվածը, քանզի նա հավասարակշռված հոգեկանով կարողանում է ապրել լիարժեք, «մարսել» այն մնացորդային ապրումները, որոնք ժամանակի սղության, վտանգի առկայության և այլ պատճառներով չէր կարողացել լիարժեք ապրել, իրատեսորեն գնահատել կատարվածը: Սա ինքնամաքման, ինքնակայացման կարևորագույն փուլ է: Այս փուլում անձը ավելի շատ հակված է անցյալի սխալների վերլուծման, դասեր քաղելու, նոր հասողություններ ձևավորելու: Անձը հիմնվում է անցյալի փորձի, նոր գաղափարների, կյանքի, իրականության վերաիմաստավորման և վստահության վրա: Նա ակտիվորեն մշակում է կենսագործունեության իրականացման նոր ուղիներ, սովորական ծրագրեր: Անցյալի փորձը նրան դարձնում է սառնասիրտ, բանիմաց, խոհուն ու հավասարակշռված: Այս փուլի անբարենպաստ ընթացքը, նոր խոչընդոտների առաջացումը կամ ժամանակի պակասը և այլ ղոժարությունների առկայությունը կարող են բացասական ազդեցություն ունենալ երևույթների վերաարժեքավորման դրական գործընթացի վրա: Անձը կարող է կորցնել իր հնարավորությունների նկատմամբ վստահությունը: Իրականությունը կարող է թվալ դաժան և անելանելի: Կարող են ձևավորվել հավատի կորստի, թերարժեքության զգացումներ, ֆրոստրացիայի վիճակներ, որոնք տարբեր ազդեցիվ վարքի ձևերով կարող են դրսևորվել միջանձնային հարաբերություններում: Առաջացած հոգեվիճակները կարող են ուղղվել մինչև անգամ իր դեմ:

Հինգերորդ փուլը հոգեկան ապրումներից, հիմնախնդիրներից ազատագրված ակտիվ գործունեության փուլ է: Այս փուլում անձը հանդես է գալիս յուրօրինակ վերածննդի տեսքով: Անցած իրադարձությունները, հոգեկան ապրումները գնահատվում են որպես ռեալ կենսագրություն, ինքնանճանաչում: Ծնվում են ավելի իրատեսական գաղափարներ: Սահմանափակվում են դրդապատճառների բազմազանությունը, անձը ուշադրությունը կենտրոնացնում է կոնկրետ նպատակի վրա: Մտածողությունը դառնում է հստակ և սթափ, որոշումները դառնում են իրատեսական և, որ ամենակարևորն է, իր հնարավորություններին համապատասխան: Իրադրությունների հավանական փոփոխությունների կանխատեսմանն ուղղված վերլուծությունները նրան դարձնում են գործնական և կյանքային: Անցյալի փորձը նրան դարձնում է սթափ, գործողությունները՝ հավասարակշռված:

Այսպիսով, 1998-2003 թթ. ընթացքում մեր կատարած հետազոտությունների արդյունքում հանգել ենք մի շարք եզրակացությունների: Կարծում ենք, որ դրանց հաշվառումը հնարավորություն կտա մասնագետներին ոչ ստանդարտ իրավիճակներում կանխարգելելու և կառավարելու մարդկանց վարքը, ինչպես նաև ապահովելու նրանց ընդհանուր և հոգեկան առողջության պահպանման սոցիալ-հոգեբանական պայմանները:

1. Ժամանակակից սոցիալ-տնտեսական, քաղաքական բնականոն զարգացումները զուգակցվում են անձի ընդհանուր և հոգեկան առողջությանը սպառնացող բազմաբնույթ սոցիալական, քաղաքական, տնտեսական ղոժարություններով, որոնց հարմարվելու, դրանցում կենսունակ դառնալու համար պահանջվում են, ստեղծված պայմաններին հա-

մապատասխան, անձի օրգանիզմի գործառույթային հնարավորությունների վերակառուցում, հարմարում:

2. Անբարենպաստ սոցիալ-քաղաքական, տնտեսական փոփոխությունները անդրադառնում են անձի հոգեֆիզիոլոգիական ոլորտի պաշտպանողական և հարմարողական հնարավորությունների բնականոն ընթացքի վրա՝ առաջացնելով բացասական հոգեվիճակների կայուն ֆոն, անձի բնավորության ակցենտավորվածություն: Վերջիններս փոխակերպվում են նրա սոցիալ-հոգեբանական վարքագծում՝ կրելով զանգվածային բնույթ:

3. Մարդկանց մեջ դրսևորվող սոցիալ-հոգեբանական բացասական տեղաշարժերը կրում են «ախտանիշների» արտահայտվածության փուլային բնույթ, որոնցից յուրաքանչյուրն ունի իր բնորոշ բնութագրերը, հոգեֆիզիոլոգիական համակարգերում՝ գործառույթային հնարավորությունների փոփոխություններում նկատվող օրինաչափությունները:

М. П. МКРТУМЯН - Особенности трансформации негативных психических состояний в социально-психологическом поведении личности. - В работе изучаются особенности влияния и трансформации негативных психических состояний людей и их проявления в социально-психологическом поведении в разных условиях жизнедеятельности. Выявлены уровень тревожности и нервно-психического напряжения, оценка счастья людьми, живущими в напряженных условиях. Экспериментальным путем доказано, что под влиянием негативных психических состояний изменяются характеристики социально-психологического поведения людей. Выделены пять закономерных этапов психофизиологических, поведенческих изменений, которые своими характеристиками отличаются друг от друга.